

Գ. Վ. Աբգարյան

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՅՆԵՐ

13-րդ դարի Մի ԱնՏիՊ երկ ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԸ

Ավելի քան տասը հայ խոշոր մատենագիրների երկեր մեղ շնհ հասել: Գրանցից են Շապուհ Քաղաքատունու (X դ.), Հովհաննես Սարկավազի (XI դ.), Հովհան Տարոնացու (XI դ.), Մխիթար Գոշի (XII դ.), Վանական վարդապետի (XIII դ.) և այլոց պատմագրական երկերը: Որոշ գործեր պահպանվել են միայն մասամբ, ինչպես Փավստոս Բուղանդի (V դ.), Ուխտանեսի (X դ.), Մխիթար Անեցու (XII—XIII դդ.) զործերը: Կորուստները երբեմն անդառնալի են թվացել, երբեմն էլ այս կամ այն երկի հայտնաբերումը հույս է սփռել նաև մյուսների վրա: Անցյալ դարում գտնվեցին մինչ այդ կորած համարված «Սերբոսի Պատմությունը» և այլ աշխատություններ: Ընդամենը մի քանի տարի առաջ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական պատահիկների ֆոնդում Մատենադարանի ավագ ղիտաշխատակից Ս. Քուանջյանին հանդիպեց Ուխտանեսի Պատմության մի նոր հատված:

Սույն հաղորդմամբ մենք հայտնելու ենք ևս մի նոր, անտիպ բնագրի մասին, որը մեր կարծիքով պատկանում է Մխիթար Անեցու զրչին:

Մխիթար Անեցին XII—XIII դդ. հայ նշանավոր մատենագիրներից է: Անցյալ դարի երկրորդ կեսին պրոֆ. Ք. Պատկանյանն արքեպիսկոպոս Սարգիս Հասան-Ջալալյանցին պատկանած ձեռագրերից մեկի մեջ՝ գտավ այս պատմիչի երեք պրսկից բաղկացած ընդարձակ Պատմության առաջին պրակը և 1879 թ. հրատարակեց Պետերբուրգում², Պատմության մյուս երկու պրակները դեռ մնում են կորած: Պահպանվել են տեղեկություններ այն մասին, որ Մխիթար Անեցին հիշյալ Պատմությունից զատ գրել է նաև «Պատճառ խաւարման Արեղական և Լուսինյան և այլ աշխատություններ, որոնք մեղ շնհ հասել: Զպահպանված երեքերի շարքում է դասվել նաև «Պատմութիւն Յանույ քաղաքին» զրվածքը, որի մասին իմանում ենք «Պատմագիրք հայոց» խորագիրը կրող մատենագիտական ցանկից: Այստեղ կարգում ենք. «Մխիթար Յանեցի, որ է Պատմութիւն Յանույ քաղաքին և այլ ինչ բանից պիտանեաց»³:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 7584 (թ. 348ա—349բ) և № 3079 (թ. 253ա—բ)

1 Արքեպիսկոպոս Սարգիս Հասան-Ջալալյանցին պատկանած այս ձեռագիրը, որը ժամանակին Ք. Պատկանյանն իր հետ տարել էր Պետերբուրգ, այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, ձ. № 2678, Մխիթար Անեցու Պատմությունն այս ձեռագրում գրավում է 232ա—257բ, 138բ, 230բ—231բ էջերը:

2 Մխիթարայ Անեցույ Պատմութիւն, սկիզբն, զլուխք Իէ և յաւելուածք, ի լոյս ած Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1879. հրատարակված է «Սերբոսի Պատմությանը» կից, «Պատմութիւն Սերբոսի եպիսկոպոսի ի Հերակլն և սկիզբն նորագիտ Պատմութեան Մխիթարայ Անեցույ» ընդհանուր խորագրով:

3 Հ. Կճառյանը Մխիթար Անեցու այս աշխատության կապակցությամբ հայտնում է մի տեղեկություն, որն արդյունք է սկզբնաղբյուրի ոչ ճիշտ վերծանման: Մխիթար Անեցու մասին հայտնող հեղինակները (Վարդան վարդապետ, Յաւարումն Պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 137, Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 64, Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1896, էջ 623) միաբերան գրում են, որ «Պատճառ խաւարման Արեղական և Լուսինյան աշխատությունը Մխիթար Անեցին թարգմանել է Ոճ'իէ (կամ Ոճ'իէէ) անունով մի պարսիկ գիտնականից, որն իր հերթին այս աշխատությունը թարգմանած է Լեղել հունարենից, Պրոֆ. Հ. Աճառյանը պարսիկ գիտնականի Ոճ'իէ անունն ընկալել է որպես հայոց Ոճ'իէ թվական. տես Հ. Ա. ճ ա ո յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ, Երևան, 1946, էջ 370:

4 Տե՛ս Մատենագիտական բնագիր ԺԳ, տպված՝ Հ. Ա. Ան ա ս յ ա ն, Հայկական մատենագիտություն, հատոր Ա, Երևան, 1959, էջ LV:

ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այնտեղ ընդօրինակված «Պատմութիւն քաղաքին Յանւոյ» խորագիրը կրող և մինչև այժմ անհայտ հեղինակի գործ համարված բնագիրը⁵ կարելի է նույնացնել Մխիթար Անեցու երկի հետ:

Ձեռագրում Մխիթար Անեցու անունը չի պահպանվել, սակայն Մխիթար Անեցու հեղինակության մասին է վկայում բնագրի վերնագիրը, որը համընկնում է «Պատմագիրք հայոց» մատենագիտական ցանկում Մխիթար Անեցու անվան դիմաց նշված «Պատմութիւն Յանւոյ քաղաքին» երկի վերնագրին, ընդհուպ մինչև Անի քաղաքի անվան ոչ շատ սովորական ձևով («Յանւոյ») գործածությունը:

Մխիթար Անեցու հեղինակությունը հաստատող փաստ կարելի է համարել նաև երկի հորինման ժամանակը, որը համընկնում է Անեցու ապրած ժամանակին: Երկում նշված վերջին դեպքը վերաբերում է 1236 թ.Ն: Հայտնի է, որ Մխիթար Անեցին ապրել է Սամվել Անեցուց հետո և Վարդան Արևելացուց առաջ: Սամվել Անեցին իր ժամանակագրությունն ավարտում է 1166 թ., իսկ Վարդան Արևելցին՝ 1270 թ.: Այսպիսով 1236 թ. համապատասխանում է Մխիթար Անեցու ապրած ժամանակին:

Մխիթար Անեցու օգտին է խոսում նաև նորահայտ բնագրի բառապաշարը, ինչպես նաև գրվածքի շարադրման եղանակը: Այսպես, օրինակ, ձեռագրերում «Պատմութիւն քաղաքին Յանւոյ» բառերին անմիջապես հաջորդում է բնագրի հորինման հանգամանքի մասին մի տեղեկություն, որն իր բնույթով մոտենում է Մխիթար Անեցու մեզ հայտնի տպագիր Պատմությանը վերաբերող տեղեկություններին: Նկատի ունենք հետևյալ արտահայտությունները. նորահայտ բնագրում՝ «ծայրաֆաղ և համառօտ ժողովեալ յայսմ վայրի»⁷, իսկ տպագիր Պատմությունում՝ «ի մտի եղի գրել ծայրաֆաղ աստ»⁸ և «քաղեսցուք աստի համառօտ և հակիրճ բանի»⁹: Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ հեղինակը ճաստառտ ծայրաֆաղ է անում իր աղբյուրները և այդ մասին հայտնում է գրեթե միևնույն բառերով:

Այստեղ հետաքրքիր է ծայրաֆաղ բառի միևնույն առումով գործածությունը երկու բնագրերում: Հայ մատենագիրներն այս բառը, սովորաբար գործածում են «ծայրաքաղ առնել» կապակցության մեջ¹⁰, այնինչ և՛ նորահայտ բնագրում և՛ Մխիթար Անեցու տպագիր Պատմությունում բառը գործածված է ընդհանուր սովորությունից շեղվող ձևով՝ «ծայրաքաղ գրել»։ «ծայրաքաղ ժողովել»: Սա նույնպես կարևոր փաստ է, որը խոսում է երկու բնագրերում միևնույն հեղինակի գրչի առկայության մասին:

5 Այս բնագիրը Հ. Ս. Անասյանի «Հայկական մատենագիտությունում» (հատ. Ա, էջ 893—894) նշված է որպես անհայտ հեղինակի գործ: Հ. Ղ. Ալիշանը («Շիրակ», էջ 111) Անիի կապակցությամբ վկայակոչում է մի արտահայտություն («Անի, թագաւորաբնակ քաղաք, նաև աստուածաբնակ ասեմ և ոչ ամաշեմ»), որը հանդիպում է նաև մեր բնագրում և որից կարելի է ենթադրել, որ Ալիշանը ծանոթ է եղել քննարկվող բնագրին: Սակայն, Ալիշանին նույնպես անհայտ է մնացել երկի հեղինակը: Նա բնագիրը վերագրում է «ուրումն ազգայնոյ յետին դարուց, որ համառօտեալ զղէպս անցից քաղաքիս»: Ալիշանը բնագիրը համարել է «յետին դարուց» հավանաբար այն պատճառով, որ ձեռագրերում այս բնագրին որպես շարունակություն թյուրիմացաբար ընդօրինակված է ուշ ժամանակներին վերաբերող մի ժամանակագրություն, որը կապ չունի Անիի հետ:

№ № 7584 և 3079 ձեռագրերում նույնպես «Պատմութիւն քաղաքին Յանւոյ» երկը սխալմամբ ընդօրինակված է երկու այլ բնագրերի հետ միասին, որոնք Անիին չեն վերաբերում: Հ. Ս. Անասյանի «Հայկական մատենագիտությունում» (հատոր Ա, էջ 894) այս երկի կապակցությամբ ձեռագրերից բերված էջերը պետք է ուղղել այսպես. «№ 7584, էջ 348ա—349ա, սյունակ 2-րդ, տող 14, № 3079, էջ 253ա—բ (թերի)»:

6 1236 թ. Անիի գրավման թվականն է, որով ավարտվում է «Պատմութիւն քաղաքին Յանւոյ» խորագիրը կրող բնագիրը: Գրչական աղավաղման պատճառով ձեռագրում ՃՁԵ (=1236) թ. փոխարեն հանդիպում է ՃՁԷ (=1238) թ.: Սխալն առաջացել է ն և է տառերի շփոթի հետևանքով:

7 Ձև. № 7584, թ. 348ա, և ձ. № 3079, թ. 253ա:

8 Մ խ ի թ ա ր Ա ն ե ց ի, Պատմութիւն, Ս. Պ-բուրգ, 1879, էջ 33:

9 նույն տեղում, էջ 15:

10 «Մայրաքաղ առնել» արտահայտության գործածության օրինակներ տե՛ս նոր բառգիրք հայկազնան լեզուի, Կրկասիրութիւն... Հ. Գարրիէլի Աւետիբեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեանր Հ. Մկրտչի Աւգերեան, հատոր առաջին, Ա—Կ, Վենետիկ, 1836, էջ 1006:

«Պատմութիւն քաղաքին Յանւոյ» երկն աչքի է ընկնում լեզվական ճոխությամբ և հարուստ է գեղեցիկ համեմատութիւններով: Բերենք մի նմուշ.

«Եւ մնայր քաղաքն Յանի որպէս զփայտ որ միշտ խանձի ի հրոյ: Զի երբեմն Յոյնք գային և տիրէին աշխարհին և երբեմն Արարացիք գային զօրօք և բռնանային ի վերայ հայրենատուն աշխարհին Շիրակայ: Եւ զի էր որ պարսիկք որպէս զբորեխ և զմժղուկս լնանէին ի քաղաքս, ի բերդորայս և յաւանս ազարակօք հանդերձ և սեղեխարար ապականէին զըքնաղ, օրիորդաձև, հարսնապաճոյճ զտունս և զկեղեցիս, կառուցելոյ արեամբք և երկօք, բազմաքրտնաչան լուսաւորօք: Եւ թողին զնա որպէս զտաղաւար մրգածախաց, որպէս զպարտէզ սելխենից անցելոց, իբրև զտատրակ, մենացեալ ի զուգակցէ և որպէս զազուս նստեալ ի վերայ կոթողոյ: Եւ անցորդք ճանապարհաց շարժեալ զզլուխ իւրեանց ասէին զգիարդ եղև հաւատարիմ քաղաքս աւերակ ի մարդկանէ: Եւ մնայր այնպէս երբեք և կոծկոծեալ իբրև զտերևս ոստոց եղևին ծառոց, սաստիկ բախելոց ի հողմոց, զամս Ղէ՛՛՛»¹¹

Բավական է ասել, որ բերված հատվածում հանդիպում են վեց բառ, որոնք անհայտ են մնացել ինչպես նոր հայկազյան բառարանին, այնպես էլ Աճառյանի Արմատական բառարանին, Մալխասյանցի բացատրական բառարանին և մեզ հայտնի մյուս բոլոր հայերեն բառարաններին: Այդ բառերն են՝ 1. հայրենատուն (ածական), 2. բորեխ¹² (= մորեխ), 3. օրիորդաձև, 4. բազմաքրտնաչան, 5. մրգածախ (= մրգավաճառ), 6. կոծկոծեալ: Այլուր հանդիպում են ևս երեք անծանոթ բառեր՝ 1. նախագեկուցիկ, 2. հենահարուրիւն, 3. երիջաւողական:

Այսպիսով «Պատմութիւն քաղաքին Յանւոյ» նորահայտ երկը, շնայած իր փոքր ծավալին, ոչ միայն նորություն է բերում պատմագիտությանը, այլև հայ բառարանագրությունը հարստացնում է մինչև այժմ անհայտ իննը բառով:

ՄԻ ՈՒՂՂՈՒՄ ՄԵՆԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ԱՂԾԱՏՎԱԾ ԲՆԱԳՐՈՒՄ

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը հանդիսանալով Արևելքի ժողովուրդների իրավաբանական մտքի բացառիկ արտահայտություններից մեկը, անցյալ դարից սկսած իր վրա է սևեռել հայ և օտար գիտնականների ուշադրությունը: Նրանով զբաղված գիտնականների թիվը հասնում է տասնյակների: Հայ մեծ մտածողի աշխատությանն անդրադարձել են իրավաբաններ, պատմաբաններ, ազգագրագետներ, լեզվաբաններ և գիտության զանազան այլ բնագավառների մասնագետներ:

Իր նշանակությամբ դուրս գալով ազգային սահմաններից՝ «Հայոց Դատաստանագիրքը» լրիվ կամ հատվածաբար թարգմանվել է նաև օտար լեզուներով: Գոյություն ունեն Դատաստանագրքի միջնադարյան մի քանի խմբագրություններ լատիներեն, լեհերեն, ղփչազերեն, վրացերեն և ռուսերեն: Հայ անդրանիկ օրենսգիրքը լայն տարածում է ունեցել նաև ձեռագրական աշխարհում: Մեզ հասել են Դատաստանագրքի բազմաթիվ ընդօրինակություններ: Բավական է ասել, որ միայն Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են այս գրքի 34 միջնադարյան ընդօրինակություններ:

Ինչպես գրավոր մշակույթի յուրաքանչյուր հուշարձան, այնպես էլ Մխիթար Գոշի աշխատությունը դարերի ընթացքում ընդօրինակվելով կրել է որոշ փոփոխություններ. բնագրի այլևայլ հատվածներ կորցրել են իրենց սկզբնական պատկերը, աղճատվել, ստացել են նոր տեսք: Եվ ինչքան որ շատ են եղել Դատաստանագրքի բովանդակությունը շոշափած մասնագետները, այնքան էլ սակավ է թիվն այնպիսիների, որոնք զբաղված լինեին բնագրագիտական վերլուծությամբ, փորձեին բանասիրորեն մոտենալ Դատաստանագրքի բառային կազմի ակունքներին, վերծանել կամ վերականգնել աղճատված բնագրական միավորները:

¹¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձ. № 7584, թ. 348ր:

¹² Մալխասյանցի հայերեն բացատրական բառարանում (էջ 388) կարդում ենք. «Բորեղ—անորոշ ցեղի պիծակ կամ բղեղ (°)»: «Պատմութիւն քաղաքին Յանւոյ» երկում այս բառը գործածված է «բորեխ» ուղղագրությամբ, որը մեզ ավելի հավանական է թվում (հմմտ. «մորեխ»)։ ուստի և նպատակահարմար գտանք բառը բերել ի շարս մյուս նորահայտ շառերի: Մալխասյանցը կասկածելի է համարել բառի բացատրությունը (սպիծակ): Բայց մեր քաղած բնագիրը հաստատում է նրա կարծիքը: Բառը հանդիպում է բնագրի հետևյալ նախադասությունում. «Եւ զի էր որ պարսիկք որպէս զբորեխ և զմժղուկս լնանէին ի քաղաքս»: Այստեղ «բորեխը», իսկապես, պիծակի նշանակություն ունի:

Սույն հոդվածում մեզ հետաքրքրում է Մխիթար Գոշի հիշատակարանում հանդիպող մի արտահայտություն, որը կարևոր դեր ունի Դատաստանագրքի հորինման ժամանակափուլը որոշելու գործում:

Բանասերները Դատաստանագրքի ստեղծման ժամանակի մասին հայտնել են տարբեր կարծիքներ: Ոմանք գտել են, որ Մխիթար Գոշը Դատաստանագիրքը կազմել է մեկ տարվա՝ 1184 թ. ընթացքում, ոմանք էլ ենթադրել են, թե նրա հորինումը տեղի է տարիներու ծրկու կողմերն էլ բերել են իրենց տեսակետը հիմնավորող կողմաներ, որոնց մասին բանասիրությունն արդեն իր կարծիքն ունի:

Մեզ զբաղեցնողը Դատաստանագրքի նորագույն ուսումնասիրողներից մեկի վերջերս հրատարակած մի հոդվածում՝ վկայակոչված մի նոր փաստ է, որն իրենից ներկայացնում է Մխիթար Գոշի հիշատակարանի հենց սյն արտահայտությունը, որ, ինչպես կպարզվի ստորև, հանդիսանում է հոդվածագրի շնկատած մի գրչական վրիպակ: Նրա վրա հենվելով հոդվածագիրը փորձել է ցույց տալ, որ Մխիթար Գոշը 1184 թ. արդեն գրել-վերջացրել էր իր գիրքը:

Այս է խնդրո առարկա արտահայտությունը. «Ջամհենեսան զկնի մեր եկեալսդ, զհարս եւ զեղբարսդ, ի զանազան ժամանակս, աղաչեմ մաղթանօք զյուզվ եւ զոչ սակաւ սխալանս ուղղեալք պատահեալք ընթերցման երկու տառիս եւ զիրաւացի թերին լցջիք»:

Այստեղ հանդիպող «պատահեալք ընթերցման երկու տառիս» արտահայտությունն աղավաղումն է Դատաստանագրքի սկզբնական բնագրում Մխիթար Գոշի գրած «պատահեալք ընթերցմամբ տառիս» արտահայտության:

Բերելով աղճատված արտահայտությունը հոդվածագիրը գրում է. «Միջնագրում տառ բառը ի թիվս այլ նշանակությունների ունեցել է նաև զիրև, մատյան, կանոն իմաստը: Նշանակում է հիշատակարանը գրելու ժամանակ Դատաստանագիրքը կազմված էր, ինչպես շատ պարզ ստում է Մխիթարը, երկու գրքից, մատյանից, կամ որ միևնույն է՝ երկու մասից: Հետևապես նախագրությունից բացի կար ե բուն Դատաստանագիրքը... Դատաստանագիրքը իր սկզբնական խմբագրության ձևով իրոք երկու մասից էր կազմված՝ նախագրություն և բուն Դատաստանագիրք (առանց մասերի)»³:

Նախ ասենք, որ եթե անգամ բնագիրն աղավաղված չլիներ և Մխիթար Գոշն իր հիշատակարանում ակնարկած լիներ իսկապես «երկու տառից» բաղկացած մի դատաստանագրքի մասին, դարձյալ դրանից չէր կարելի եզրակացնել, թե հիշատակարանը գրելու ժամանակ «երկու տառերն» անպայման պատրաստ էին: Հոդվածագիրը պետք է ուշադրություն դարձնեք Մխիթար Գոշի այն խոսքերի վրա, որտեղ առանց երկվություն, շատ որոշակիորեն հայտնվում է, որ Դատաստանագիրքը գրվել է հիշատակարանից հետո. «Բայց զծագրութիւն յիշատակիս ի նախադրութիւնս գրոցս Դատաստանի եղև... եւ աբղ ուրբան է կար ի գործ անկանիմ հիսուսը զկնի զիս Դատաստանի»⁴: Ուրեմն հիշատակարանը գրված է Դատաստանագրքից առաջ, գրքի ներածականում, իսկ եթե որեէ գրքի ներածականում հայտնվում է առաջիկա գրքի ծավալը՝ դա դեռ չի նշանակում, թե ներածականը գրելու ժամանակ գիրքը արդեն նշված ծավալով անպայման պատրաստ էր: Հեղինակները սովորաբար գրքի ներածականում հայտնում են իրենց ծրագիրը, ներկայացնում են գիրքը, բայց թե ներածականից հետո հաջողվում է իրագործել այդ ծրագիրը՝ դա մնում է հետագային:

Ինչ վերաբերում է «պատահեալք ընթերցման երկու տառիս» աղճատված արտահայտությանը՝ ապա հայ հին ձևագրերին ծանոթ յուրաքանչյուր մասնագետի քաջ հայտնի է, որ գրիչները հիշատակարաններում «տառ» բառը գործածել են ընդհանրապես իրենց ընդօրինակած ամբողջ բնագիրը նկատի ունենալով, անկախ նրանից, թե ընդօրինակվող բնագիրը քանի՞ մասերից բաղկացած կլիներ: Այդպես էլ Մխիթար Գոշը հիշատակարանի սկզբնական բնագրում գրելով «հանդիպեալք ընթերցմամբ տառիս» այլ բան չի արել, քան կրկնել է իրենից առաջ ապրած հարյուրավոր գրիչների և «տառ» բառով նկատի է ունեցել առհասարակ Դատաստանագրքի ընդօրինակությունը, առանց բնագիրը այս կամ այն մասի բաժանելու:

Դատաստանագրքից անհամեմատ ավելի մեծ ծավալ ունեցող ժողովածուներն ընդօրինա-

1 Խ ո ս ր ո վ Թ ո ռ ո ս յ ա ն, Երկու խմբագրություն Մխիթար Գոշի Դատաստանագրքի, օճաները Մատենադարանի», № 6, 1962, էջ 57—74:

2 Մ խ ի թ ա ր Գ ո շ, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 69 (ընդգծումը հոդվածագրի են է—Գ. Ա.):

3 Խ. Թ ո ռ ո ս յ ա ն, նշված հոդվածը, էջ 62:

4 Մ խ ի թ ա ր Գ ո շ, Դատաստանագիրք, էջ 74 (ընդգծումները մերն են—Գ. Ա.):

կելիս նույնպես զրիչները գործածում են միևնույն «տառ» բառը, առանց նշելու, թե քանի՞ տարբեր բնագրեր են իրենք ընդօրինակում: Այնպես որ «պատահալք ընթերցմամբ տառիս» արտահայտությունը զրիչների լեզվում արդեն ընդհանրություն գտած մի անփոփոխ դարձվածք է. Այստեղից էլ պարզ երևում է, որ հոգվածագրի համար փաստ ծառայած արտահայտությունը Դատաստանագրքում պարզապես աղավաղումն է այլ անփոփոխ դարձվածքի: Գոշի հիշատակարանն ընդօրինակող զրիչը «ընթերցմամբ» բառի վերջին բ տառն անուշադրաբար ընկալել է որպես Բ (= Երկու) թվանշան և այդպիսով «ընթերցմամբ տառիսը» դարձել է «ընթերցման Բ» (= Երկու) տառիս: Այս զրչական վրիպակի հիման վրա հոգվածագիրը ենթադրել է, թե հիշատակարանը զրելու ժամանակ Դատաստանագրքի «Երկու տառն» էլ պատրաստ էին:

Թյուրիմացությունից կարելի էր խուսափել Դատաստանագրքի Մատենագրարանում պահվող մյուս ձևագրերն ստուգելով, ինչպես նաև՝ հայկական ձևագրերի հիշատակարանների տպագիր ժողովածուներին դիմելով: Բավական էր թերթի, օրինակ, ժԴ դարի հայկական ձևագրերի հիշատակարանների ժողովածուն⁵, որպեսզի համոզվել, որ «պատահալք ընթերցմամբ» արտահայտությունը հիշատակագիրների գործածած ամենասովորական արտահայտություններից է: Ահա մի քանի օրինակ. «ոք հանդիպեսցի սմայ ընթերցմամբ» (էջ 19), «հանդիպալք սմա ընթերցմամբ կամ արիսակելով» (նկատենք, որ «արիսակելով» բառն էլ է գործածված գործիական հոլովով, ինչպես որ «ընթերցմամբ»-ը, էջ 120), «հանդիպեսցէ սմա տեսութեամբ կամ ընթերցմամբ (179), «հանդիպիբ այսմ տառի կամ ընթերցմամբ կամ զաղափար առնելով (187), «հանդիպիբ սմա տեսութեամբ կամ արիսակելով» (198), տե՛ս նաև 226, 227, 238, 251 էջերը և այլն, և այլն: Մեկնաբանությունն ավելորդ է:

«Աղաչեմ մաղթանօք զյոլով և զոչ սակաւ սխալանս ուղղեսցիբ պատահալք ընթերցմամբ տառիս» արտահայտությունը բառացի թարգմանվում է այսպես. «Աղաչում եմ մաղթանքով, բազմաթիվ և ոչ թե սակավ սխալներս ուղղեցեք, ովքեր որ ընթերցանությամբ (ընթերցելու ժամանակ, ընթերցելիս, ընթերցելով) կսլատահեն զբաժիս»:

Ինչպես տեսնում ենք, «ընթերցմամբ» ասելով Գոշը (ինչպես մյուս զրիչները) նկատի է ունենցել անձամբ այն մարդկանց, որոնք իրենք են ընթերցելու բնագիրը և ուղղելու սխալները: Եվ ահաստարակ, տարօրինակ է՝ մտածել, թե Գոշը փոխանակ զրելու «խնդրում եմ Դատաստանագիրքս կարդացողներին» զրեր՝ «խնդրում եմ Երկու տառս կարդացողներին» (թեկուզ «տառ» բառը զիրք նշանակեր):

Նշված փաստերի լույսի տակ, կասկած չի մնում այն բանում, որ Դատաստանագրքի բնագրում սկզբնապես եղել է ոչ թե «ընթերցման Բ» (= Երկու) տառիս, այլ՝ ընթերցմամբ տառիս:

Քանի որ այս արտահայտությունը, առանց քննարկվող հոգվածի հետ առնչվելու էլ, որոշակի նշանակություն ունի Դատաստանագրքի հորինման կապակցությամբ Մխիթար Գոշի հաղորդածը ճիշտ հասկանալու համար, շարունակենք նրա քննարկումը, դիմելով նաև Գոշի հիշատակարանը պարունակող ձևագրերին:

Այստեղ ամենից առաջ աչքի է դարձնում այն հանգամանքը, որ հիշատակարանի սկզբնական օրինակում «ընթերցմամբ» բառն իսկապես ղժվարընթերցելի է եղել, զրա համար էլ որոշ զրիչներ այս ընդօրինակել են մեր նշած ձևով՝ «ընթերցման Բ», իսկ մի քանի զրիչներ էլ բառավորաբար ՄԲ տառերը կարդացել են ՄԲ (= սուրբ) և արտահայտությունը դարձրել են «ընթերցման սուրբ տառիս»: Այսպիսով, գործ ունենք բառի երկու տեսակ աղճատման հետ:

Հիշատակարանը պարունակող մեզ հայտնի ձևագրերն ընդհանուր առմամբ ներկայացնում են հետևյալ պատկերը:

Մաշտոցի անվան Մատենագրարանում պահվող ինն ձևագրերից երեքը (488, 2635, 6496) ունեն «ընթերցման Բ տառիս» սխալ ձևը, հինգը (795, 2655, 2775, 3562, 8926) առանց «Բ» թվանշանի են, իսկ մեկը (486) «Բ տառիս»-ի փոխարեն ունի «Բ տառիս»: Դատաստանագրքի հնագույն ձևագրերից մեկը, որ պահվում է Վենետիկում (տես Ն. Ղ. Ալիշան, Հայաստանում, էջ 406 և Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, Վաղարշապատ, 1880, էջ 69, ծան. Դ), ինչպես նաև այս ձևագրերից ընդօրինակված երեք ուրիշ ձևագրեր (55, 104, 111), որոնք գտնվում են Փարիզի Ազգային Մատենագրարանում (տես F. Macler, Catalogue des Manuscrits arméniens et Géorgiens de la Bibliothèque Nationale, Paris, MDCCCXVIII, p. 96—97). նույնպես չունեն «Բ» թվանշանը: Այս թվանշանը չունի նաև Ջամաթի Դատաստանագիրքը (ձև. Մ 226, միկրոլուսանկարը պահվում է մեր Մատենագրարանում), որն ընդօրինակված է Գոշի

⁵ «ԺԴ դարի հայկական ձևագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ո. Խուշիկյան, Երևան, 1950:

մահից 27 տարի հետո՝ 1240 թ.։ Այսպիսով, մեղ հայտնի 14 ձեռագրերից միայն տպագիր Դատաստանագրքի համար հիմք ծառայած ձեռագրում (488, նախկին համարը՝ 492, ընդօրինակված է 1295 թ.) և Նրանից արտագրված երեք այլ ձեռագրերում սպրդել է «Բ տառիս» սխալը, մնացածները, որոնց թվում և Դատաստանագրքի հնագույն ձեռագիրը, ունեն կամ «ընթերցմամբ տառիս» (2775, 3562 և Զմմառի հնագույն Դատաստանագիրքը), կամ «ընթերցման սբ տառիս» (8926, 2655, 795), կամ էլ՝ դարձյալ զերծ են «Բ» թվանշանից, ունենալով «ընթերցման տառիս» (Վենետիկի հնագույն ձեռագիր և Փարիզի № 55, 104, 111 ձեռագրեր) ձևերը։

«Բ» թվանշանը ներմուծող գրիչը մեքենայաբար ընդօրինակելով ընագիրը, չի նկատել, որ «տառիս» բառը Գոշը գործածել է եզակի թվով, ուստի չէր կարող բառից առաջ գրել հոգնակի թիվ ցույց տվող «Բ» թվանշանը։ (Հոգնակիի դեպքում կլիներ «Բ տառից» կամ «Բ տառիցս»)։

«Սուրբ» բառի ներմուծումը նույնպես կատարվել է մեքենայաբար։ «Սուրբ տառ» կոչվում են Աստվածաշունչը և կրոնական այլ գրքեր, որոնց քաջ տեղյակ գիտնական Մխիթար Գոշն ինքն իր իրավաբանական աշխատությունը անշուշտ չէր կարող կոչել «սուրբ» բառով։ Գոշը Դատաստանագրքի նախադրությունում ավելի քան քսան անգամ գրում է. «Գիրս դատաստանաց» և ու մի անգամ՝ «սուրբ գիրս դատաստանաց» կամ «տառս դատաստանաց»։ Իսկ նախադրության 31-րդ էջում նա ուղղակի ինքը սահմանազատում է սուրբ գրքերը դատաստանագրքից, գրելով. «ոչ միայն զսուրբ գիրս կտակարանաց և զգիրս դատաստանաց», Բացի այդ՝ ասացինք, որ հայկական ձեռագրերի հիշատակարաններում «տառ» բառով առհասարակ մատնանշվում է ընդօրինակված ընագիրն ամբողջությամբ։ Այնպես, որ եթե անգամ Դատաստանագիրքը բաղկացած լիներ իրոք «Բ տառերից» (իսկ իրականում Դատաստանագիրքը բաղկացած է երեք մասից՝ նախադրություն, Ա մաս, Բ մաս), Մխիթար Գոշը հիշատակարանում չէր գործածի «Բ տառիս» արտահայտությունը, մանավանդ, որ Գոշն ամենուրեք իր գիրքը գիտում է որպես մեկ միավոր և նշում է եզակի թվով, այսպես. «եղև պատճառ գրելոյ զսա», «զպակասն ի սմանէ», «զգիրս դատաստանի զնմանութիւն կանոնաց ունի», «մտացածին բանիւք գրեմ զսա» և այլն։

Այսպիսով, Մխիթար Գոշի Դատաստանագրքի տպագիր բնագրի համար հիմք ծառայած ձեռագրերում հանդիպող «Բ տառիս» արտահայտությունը գրչական վրիպակ է և պետք է Դատաստանագրքի ապագա հրատարակություններում սրբագրվի, որպեսզի առիթ չտա նորանոր թյուրիմացություններին։

ԿՈՌԻՆԱԿՍ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Չորրորդ դարի հույն պատմիչ Եվսեբիոս Կեսարացին¹, հայ մատենագիրներ Մովսես Խորենացին², Անանունը («Սերբոսի Պատմությանը» կից սուաչին չորս պոլիսների հոդինակը)³ և Սամվել Անեցին⁴ հիշատակում են Կոռնակ անունով մի զորավարի, որը Միջագետքում սպանել է հունաց կայսր Կարոսին։

Ի տարբերություն հայկական աղբյուրների և Եվսեբիոս Կեսարացու հայերեն թարգմանության՝ օտար աղբյուրները (Փլավիոս վոպսկուս, Եվտրոպիոս, Ավրելիոս Վիկտոր, Հերոնիմոս, Սինեսիոս, Չոնորաս և այլք) հայտնում են, որ Կարոսը ոչ թե սպանվել է զենքով, այլ՝ շանթաբար կամ հանկարծամահ է եղել։

Հայ և օտար աղբյուրների միջև առկա հակասությունը բանասերինոր բացատրել են երկու տարբեր ձևերով։ 2. Մկրտիչ Ավդերյանը գտնում է, որ օտար հեղինակների համար աղբյուր ծառայած հունական բնագրում Կոռնակ անունը, որ գրված է եղել Κορνάχη; կամ Κορ·αχος ձևերով, հույն գրիչների կողմից սխալմամբ վերծանվել է χερσυχος, որը հունարեն նշանակում է «շանթ» և այստեղից էլ ծագել է Կարոս կայսր շանթաբար լինելու սխալ պատմությունը⁵։

1 Եվսեբի Պամփիլեայ Կեսարացույ ժամանականք, թարգմանելալ ի լատին բարբառ, աշխատասիրութեամբ 2. Մ. վ. Աւղերեանց, հատ. Բ, Վենետիկ, 1818, էջ 302;
 2 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913, էջ 218—219;
 3 Պատմութիւն Սերբոսի եպիսկոպոսի, Երևան, 1939, էջ 14—15;
 4 Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 62;
 5 Եվսեբիոս Կեսարացի, էջ 362։

Վ. Լանգլուան⁶, Ղ. Ալիշան⁷, Հ. Տաշյան⁸, Ա. Գարագաշյան⁹ և ուրիշներ հակված են եղել հակառակը կարծելու: Լանգլուան գրում է. «Այս պատմությունը սոսկ մի թյուրիմացություն է: Կոռնակի առասպելի համար առիթ է հանդիսացել այն սխալ բացատրությունը, որ հայերը տվել են «Կոռնակ» բառին, որը ոչ այլ ինչ է. հիթն ոչ գրիչների ձեռքով հունարեն *κεραυος* («շանթ») բառի սխալ տառադարձությունը՝ *χορυαυτος* կամ *χορυακος* ձևով»¹⁰:

Լանգլուայի կարծիքը հիմնված է հայկական աղբյուրներից ստացած արտաքին տպավորության վրա: Իրականում Կոռնակի ավանդությունը ուրույն հայկական ավանդություն է և ոչ մի կապ չունի հունական որևէ բառի աղավաղման հետ:

Ինչ վերաբերում է Կոռնակ և *κεραυος* («շանթ») բառերի շփոթին, ապա այդ ավելի անհավանական է դառնում ձեռագրական նոր տվյալների լույսի տակ: Ն. Ադոնցն արդեն ժամանակին ենթադրել է, որ Հայոց խոսքով թագավորի սպարապետի անունը Կոռնակի փոխարեն սկզբնապես սխալ է եղած լինի Կոռնակ¹¹: Այս իրավացի կոահումը հաստատում են Սամվել Անեցու ժամանակագրության մի քանի ձեռագրեր¹², սրանց թվում նաև հնագույն ձեռագիրը¹³, որտեղ Կոռնակի փոխարեն հանդիպում է հայոց Մամիկոնյան սպարապետական տան համար ավելի սպասելի Կոռնակ անունը, որն արդեն իր տեսքով շատ հեռու է հունարեն *κεραυος* բառից և հազիվ թե շփոթվեր նրա հետ:

Լանգլուայի վկայակոչած աղբյուրներից Սամվել Անեցու ժամանակագրությունում Կոռնակ անունից բացի բերված է նաև մի ամբողջ ավանդություն այն մասին, որ Կոռնակը եղել է Հայոց ռոստրով մեծ թագավորի սպարապետը, որ նա ապրել է 160 տարի և մինչև խոր ծերություն պահպանել է մարմնի երիտասարդական զորությունը, ունեցել է սուր տեսողություն, լսողություն, երկար մազեր: Հունարեն սոսկ մի բառի աղավաղումից, անշուշտ, չէր կարող ստեղծվել այսքան ինքնատիպ մի ավանդություն:

Այնպես որ Կոռնակի ավանդությունը հայ մատենագրության մեջ գոյություն ունեցող մի անկախ ավանդություն է: Այլ հարց է, թե այդ ավանդությունը համասպասախանում է պատմական իրողությանը, թե ոչ, արդյոք հունաց Կարոս կայսրն իրականում շանթահար է եղել, թե՛ սպանվել է Կոռնակի ձեռքով: Սրանք մանրամասն ուսումնասիրության ենթակա հարցեր են, որոնց քննարկումը մեր ծրագրից դուրս է: Մեզ զբաղեցնողն այստեղ Սամվել Անեցու անունով վկայակոչված ավանդության իրական հեղինակի հարցն է:

Ավանդությանն անդրադարձած բոլոր բանասերները (Հ. Մ. Ավգերյան, Վ. Լանգլուա, Ղ. Ալիշան, Հ. Տաշյան, Ա. Գարագաշյան) տարօրինակ կերպով անտեսել են ավանդության բուն սկզբնաղբյուրի հեղինակին՝ Անանունին, որն ապրել է Անեցուց առաջ և որից է բառացիորեն արտագրված ավանդությունը Անեցու ժամանակագրությունում:

Ավանդությունը վերագրելով Անեցուն՝ բանասերներն այս պատմիչին մեղադրել են պատմական իրողությունն աղավաղելու մեջ: Երկրայական է յիշատակն Կոռնակայ,—գրում է Հ. Ղ. Ալիշանը,—ղորմէ համարձակագոյնն և սխալագոյնն ևս գրէ Սամուէլ Անեցի, եթէ՛ հհար զԿարոս կայսր և սպանաւ Կարոս որդւովքն իւրովք ի պատերազմին»¹⁴:

Հակառակ այս կարծիքի, ժամանակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սամվել Անեցին առհասարակ ոչ մի կապ չունի Կոռնակի ավանդության հետ: Անանունից քաղված այդ պատմությունը Անեցու ժամանակագրության մեջ ներմուծված է հետագա գրիչների կողմից:

⁶ V. Langlois, Collection des historiens anciens et modernes de L'Armenie, Paris, 1896, p. 120—121.

⁷ Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 374, 376, նաև՝ Հայաստանում, մասն Բ, էջ 68:

⁸ Հ. Տաշյան, Ազաթանգեղոս առ Գեորգայ ասորի եպիսկոպոսին և ուսումնասիրությունը Ազաթանգեղայ գրոց, Վիեննա, 1891, էջ 124:

⁹ Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, մասն Գ, Քիֆլիս, 1895, էջ 319:

¹⁰ V. Langlois, նույն տեղում:

¹¹ Н. Адонц, Начальная история Армении у Себеоса в отношении к трудам Моисея Хоренского и Фавста Византийского:—«Виз. врем.», 1901, т. VIII, вып. 1—2, стр. 66.

¹² Սամվել Անեցի, էջ 62:

¹³ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձ. № 5619, թ. 63ր:

¹⁴ Ալիշան, Այրարատ, էջ 376:

Պատմաբանների և բանասերների ուշադրությունից վրիպած այս իրողությունը բացահայտող փաստերը բերելուց առաջ համեմատենք Կոռնակի ավանդությունը Անանունի և Անեցու մոտ:

Անանուն

(«Սեբեոսի Պատմություն», էջ 14—15)

...Կոռնակ սպարապետ մեծին հոսրովու հարև Տրդատայ: Ասեն զամանէ յերկարեալ զամս կենացն ՃԿ և ոնել ի ժամ մահուանն զհերս և զաշս և զլսելիս և զարութիւնն մանկութեանն...

Սամվել Անեցի

(Ժամանակագրություն, էջ 62)

...Կոռնակ սպարապետ մեծին հոսրովայ հօր Տրդատայ: Ասեն յերկարեալ զամս կենացն ՃԿ և ոնել ի ժամ մահուանն զաշս և զլսելիս և զհերս և զատամունս և զզօրութիւն մանկութեան: (Սա եհար զԿարոս կայսր և սպանաւ Կարոս որդովն իւրով ի պատերազմին):

Ինչպես տեսնում ենք, բառացի արտագրությունն այստեղ ակնհայտ փաստ է: Միայն՝ Սամվել Անեցու ժամանակագրությունում ավելացված է փակագծերում մեր բերած նախադասությունը, որով Անանունի Կոռնակը կապվում է Սամվելի Կոռնակի հետ:

Ներմուծումն անխմաստ կրկնություն է ստեղծել ժամանակագրության բնագրում: Ահա մեզ հետաքրքրող հատվածը.

«ՄՁԸ (=288). Հոռմայեցւոց՝ Կարոս հանդերձ որդովքն՝ Կարենաւ և Նոմբրիանոսիւ ամօթ (=2), ի Կարայ վախճանելն ի Միջագետս Նոմբրիանոսիւ առ Նովաւ լինէր սպանեալ ի Քրակայ ե Կարինոս ի նոյն Կորնակայ պատերազմին:

ՄՂ (=290). Հոռմեացւոց՝ Դիոկղետիանոս ամս ի (=20):

Կորնակ սպարապետ մեծին հոսրովայ հօր Տրդատայ ասեն յերկարեալ զամս կենացն ՃԿ և ոնել ի ժամ մահուանն զաշս և զլսելիս, և զհերս և զատամունս և զզօրութիւն մանկութեան: Սա եհար զԿարոս կայսր՝ և սպանաւ Կարոս որդովքն իւրովք ի պատերազմին»¹⁵:

Այստեղ նկատելի է ոչ միայն Կարոսի սպանության մասին տեղեկության ավելորդ կրկնությունը, այլև այն, որ ներմուծումը կատարված է Կարոսին չվերաբերող մասում: Ներմուծող գրիչը չի նկատել, որ Դիոկղետիանոսի անվան հիշատակությամբ Անեցին ավարտել է Կարոսի ժամանակագրությունը և անցել է հաջորդ կայսրին՝ Դիոկղետիանոսին, ուստի և անխմաստ կլիներ կրկին անդրադառնալ Կարոսին:

Անեցին ինքը բոլորովին ծանոթ չի եղել այն սկզբնաղբյուրին (Անանունին), որից կատարված է ներմուծումը: Դա երևում է հետևյալ փաստից:

Անանունը Կոռնակի ավանդությունից անմիջապես հետո Անեցու նման անցել է Դիոկղետիանոսի ժամանակագրությանը և նշել, որ Տրդատը թագավորել է Դիոկղետիանոսի 15-րդ տարում՝ «Ծամին Լ-երորդի Արտաշրի, ճեզնտասանեւորդի Դիոկղետիանոսի... թագաւորեցուցանէ Դիոկղետիանոս զՏրդատ ի վերայ աշխարհիս Հայոց»¹⁶:

Եթե Սամվել Անեցին ծանոթ լիներ Անանունին և նրա մոտ կարդացած լիներ Կոռնակի ավանդությունը՝ բնականաբար նրան հանդիպած կլիներ նաև Տրդատին վերաբերող վերոհիշյալ տեղեկությունը:

Սակայն նա գրում է. «Սկսուք... զառաջին ամն Տրդատայ զուղել զհետ երկրորդ ամին Դիոկղետիանոսի ըստ Մովսիսի Հայոց պատմագրի և ոչ իններորդին կամ առաջներորդին ըստ մանց»¹⁷:

Ինչպես տեսնում ենք, Անեցուն հայտնի են եղել Տրդատի թագավորության մասին միայն երեք սկզբնաղբյուր, որոնք հայտնել են Դիոկղետիանոսի առաջին, երկրորդ և իններորդ տարիների մասին: Իսկ Անանունի հայտնած 15-րդ տարին անհայտ է մնացել Անեցուն:

Անանունի տեղեկությունները Հայոց հոսրով թագավորի, էրա սպարապետ Կոռնակի, վերջինիս ձեռքով սպանված Կարոսի և նրա հաջորդած Դիոկղետիանոսի մասին այնքան տարբեր են Անեցու տեղեկություններից, որ կասկած չեն թողնում այն մասին, որ Կոռնակի ավանդությունն այս երկու սկզբնաղբյուրներում բխում են բոլորովին տարբեր աղբյուրներից: Այսպես, ըստ Անանունի հոսրովի սպանվել է Դիոկղետիանոսի թագավորության 4-րդ տարում, այսինքն՝

15 Ս. Ա ն ե ց ի, էջ 62:

16 Ս ե բ ե ո ս, էջ 15:

17 Ո. Ա ն և ց ի, էջ 62—63:

294 թ., իսկ ըստ Անեցու՝ Դիոկղետիանոսի թագավոր զանալուց զեռ 27 տարի առաջ՝ ՄկԳ (= 263) թ. Ըստ Անանունի Կարոսը թագավորել է յոթ, իսկ ըստ Անեցու՝ երկու տարի: Ըստ Անանունի՝ Կարոսն սպանվում է իր մեկ, իսկ ըստ Անեցու՝ երկու որդիների հետ: Ըստ Անանունի այս սպանությունը տեղի է ունեցել Հայոց Խոսրով թագավորի օրոք, իսկ ըստ Անեցու՝ Հայաստանի 27-ամյա անիշխանության տարիներին:

Անեցին հայ մատենագիրներին քաջ ծանոթ ժամանակագիր էր և նրանց վերլուծության և քննության հիման վրա է կազմել իր ժամանակագրությունը, հաճախ նշելով աղբյուրների տարածայնությունը: Այսպիսի մի մատենագիր, անշուշտ, չէր կարող լուծության մատենել Կոռնակի ավանդությանը վերաբերող այն բոլոր հակասությունները, որոնք նա կգտներ Անանունի մոտ, եթե ծանոթ լիներ նրա գործին:

Նշված փաստերի լուսի տակ Կոռնակի ավանդությունը Սամվել Անեցու ժամանակագրությունում որոշակիորեն ներկայանում է որպես հետագա հավելում: Այս իրողությունը նաև ձեռագրական փաստերով ստուգելու համար, մենք դիմեցինք Սամվել Անեցու ժամանակագրության Մաշտոցի Մատենադարանում պահվող հնագույն ձեռագրերին: Պարզվեց, որ № 5596 ձեռագրում (թ. 280ր) և նրա ընդօրինակության համար հիմք հանդիսացած երկու ավելի հին ձեռագրերում¹⁸ Կոռնակի ավանդությունը բացակայում է: Այս հանգամանքով ավելի է հաստատվում ավանդության ներմուծում լինելու փաստը:

Չնայած № 5596 ձեռագիրը նույնպես ղերծ չէ Սամվել Անեցու ժամանակագրությունը պարունակող մյուս բոլոր ձեռագրերում առկա բնագրական հավելումներից և կրճատումներից, բայց Կոռնակի ավանդությունից բացի նաև մի քանի այլ տվյալներ այս ձեռագրում ավելի մոտ են ժամանակագրության սկզբնական բնագրին, քան նույնիսկ № 5619 ձեռագրում, որը համարվում է Անեցու կենդանության օրոք՝ 1176 թվականին ընդօրինակված ձեռագիր և որտեղ արդեն Կոռնակի ավանդությունը ներմուծված ենք գտնում:

5569 ձեռագրի օգտին են խոսում, օրինակ, Բուզայի վայրագություններին վերաբերող ընդարձակ հատվածը եղբայրակող (տպ. էջ 91) և նոր նյութի մասին աղղարարող հետևյալ նախադասությունը՝ «Եւ արդ զբնացուք զարձեալ զկարգ բանիս» (հմմտ. տպ. էջ 128՝ «Իսկ մեք ի կարգ շարագրութեան զնասցուք»), որը գտնում ենք 5569 ձեռագրում (թ. 309ա) և որը բացակայում է ժամանակագրության մեղ հասած մյուս բոլոր ձեռագրերում, այդ թվում նաև «1176 թ.» ձեռագրում:

Ի դեպ՝ այս վերջին ձեռագրին անդրադարձած բոլոր գիտնականները (Ա. Աբրահամյան¹⁹, Գ. Հովսեփյան²⁰ և այլք) ձեռագրի ընդօրինակության ժամանակն անվերապահորեն համարել են 1176 թվականը: Իսկապես ձեռագրի 108ա էջում ընդօրինակված հիշատակարանում Ավետիս զրիչը նշել է 1176 թվականը՝ «Ո՞րք թուականութիւնն Հայոցոց: Այսուհանդերձ դժվար է հավատալ, թե զրեթե Անեցու կենդանության օրոք ընդօրինակված մի ձեռագրում կարող էին այնքան շուտ կատարված լինել Կոռնակի ավանդության և մյուս ներմուծումների տիպի փոփոխություններ: Դրա համար պետք է, որ ձեռագիրն ընդօրինակված լիներ ժամանակագրությունը կազմելուց առնվազն մի քանի տասնամյակ հետո:

Հիշատակարանի և ժամանակագրության այս ձեռագրում ընդօրինակված բնագրի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ձեռագիրն ընդօրինակված է իսկապես ավելի ուշ, քան՝ մինչև այժմ ընդունված է եղել կարծել:

¹⁸ № 5596 ձեռագրի առաջին էջի վրա Մեսրոպ Մաղիստրոսի ձեռքով գրված է ձեռագրի ընդօրինակության ենթադրյալ ժամանակը՝ «ԺԲ—ԺԳ դ.», սակայն ձեռագրում ընդօրինակված Հովհաննես Սարկավազի (թ. 98բ), Մխիթար Գոշի (97բ), Վարդան վարդապետի (70բ) գործերը բացառում են ժԲ դարը և մատենանշում են առնվազն Վարդանից (ԺԳ դար) հետո հաջորդած մի ժամանակ: Այս ձեռագրի 282ա թերթի վրա կարդում ենք զրչի հիշատակարանը՝ «Բ արիևակ ունէի և անունն շկայր եպիսկոպոսին ոչ ի մինն, ի միւսն հանդէպ զրած էր, թէ շու գիտ. ոչ գիտեմ, թէ հեղնած և թէ գիտն անուն էր»: Կարելի է ենթադրել, որ Կոռնակի ավանդությունը բացակայել է նաև այս երկու ձեռագրերում: Եթե նրանցում ավանդությունն ընդօրինակված լիներ՝ այդ դեպքում կընդօրինակեր նաև № 5596 ձեռագրի զրիչը, որն այդքան ուշագրությունամբ է վերաբերվել իր երկու օրինակներին հետո:

¹⁹ Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի, հրատարակության համար պատրաստեց Աշ. Աբրահամյան, Երևան, 1942, էջ 4:

²⁰ Գ. Ա. կ ա թ ո ղ ի կ ո ս, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս. 1951, էջ 461—464:

Այսպես, օրինակ, ձեռագրի 107ա էջում կարգում ենք. «ՌՃԶԵ (= 1175), փոխի մահուամբ առ Քրիստոս տէր ներսէս և փոխանորդը զաթոռն տէր Գրիգոր՝ Տղայ կոչեցեալն: Տէր Գրիգոր ամս Ի (= 20)»։ Ըստ այսմ՝ 1175 թ. կաթողիկոս է դառնում Գրիգոր Տղան, որի առաջնորդութիւնը տևում է 20 տարի, 1175 + 20 = 1195: Ուրեմն ձեռագիրն ընդօրինակված է 1195 թ. հետո:

Այսպիսով պարզվում է, որ Ավետիս գրչի ձեռքով 1176 թ. գրված հիշատակարանը պատկանում է ոչ թե քննարկվող ձեռագրին, այլ արտագրված է Սամվել Անեցու ժամանակագրության 1176 թ. ընդօրինակված մի ձեռագրից, որը մեզ չի հասել: Այս ձեռագրից մեր ձեռագիրն արտագրված է, ինչպես տեսանք, առնվազն տասնինը տարի հետո՝ 1195 թ.: Միաժամանակ նկատի ունենալով, որ Սամվել Անեցին իր ժամանակագրությունը գրել է Գրիգոր Պահլավունու կենդանության օրոք (տես Ս. Անեցի, տպ. էջ 3, 41, 51, 123 և Զարպհանալյանի ձեռագրի հիշատակարանը²¹), այսինքն՝ մինչև 1166 թ.²², կարելի է համոզվել, որ այս ձեռագրին ու Սամվել Անեցուն բաժանում է առնվազն երեք տասնամյակ ընդգրկող մի ժամանակամիջոց, որի ընթացքում արդեն ավելի հնարավոր էր Կոռնակի ավանդության ներմուծումը, քան եթե այդ ներմուծումը կատարված լիներ Անեցու կենդանության օրոք գրված մի ձեռագրում:

Նշված փաստերի միջոցով միաժամանակ պարզվում է, որ մինչև այժմ 1176 թ. ընդօրինակություն համարված ձեռագրում հետագա գրչի ներմուծումներ են նաև Պահլավունու կաթողիկոսության վերջին տարվան («ՌՃԺԶ. կաթողիկոս տէր Գրիգոր(ւ)՝ ամս Մ», թ. 103ա), ինչպես նաև Պահլավունուն հաջորդած ներսեսի կաթողիկոսությանը վերաբերող («ՌՃԿԸ. վախճանի տէր Գրիգորես և յաջորդէ զկնի նորա եղբայր նորա տէր ներսէս ամս է», թ. 107ա) տեղեկությունները, որոնք Կոռնակի ավանդության և Գրիգոր Տղային վերաբերող վերոհիշյալ ներմուծումների հետ միասին պետք է հեռացվեն Սամվել Անեցու ժամանակագրության արագահ հրատարակության բնագրից:

Г. В. Абгарян

ФИЛОЛОГИЧЕСКИЕ РАЗЫСКАНИЯ

(Резюме)

В первом разделе исследования сообщается о сохранившемся в двух рукописях Матенадарана неизданном труде «История города Ани», который автором отождествляется со считавшимся до сих пор утраченным трудом Мхитара Анеци (XIII в.).

Во втором разделе восстанавливается первоначальный текст одного сведения Мхитара Гоша (XIII в.), имеющего важное значение для определения времени создания Армянского судебника Мхитара Гоша.

Третий раздел посвящен исследованию источников Сказа о Корнаке. Выясняется, что Сказ вставлен в текст Хроники Самуела Анеци (XII в.) поздними писцами. Одновременно делается попытка найти хронологические границы первоначального авторского текста Хроники, устанавливается более точная дата написания древнейшей рукописи, содержащий Хронику Самуела Анеци.

²¹ Օ ա Ր պ հ ա ն ա լ յ ա ն, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1886, էջ 650, ծն. 2:

²² Անեցու ժամանակագրության ավարտման հավանական թվականը պետք է համարել 1165—1166 թթ.: Վերջին թվականին մահացել է Գրիգոր Պահլավունին (որի կենդանության օրոք գրված է ժամանակագրությունը), իսկ 1165 թ. ժամանակագրությունում հիշատակված վերջին թվականն է (այնուհետև հաջորդում է 1166-ից հետո եկող ժամանակագրությունը), որը վերաբերում է Անրի կապակցությամբ Վրաց թագավոր Գորգիի և Խորասանի սուլթանի միջև մղված կռիվներին: Սամվել Անեցին այս տարիներին կատարված դեպքի մասին գրում է «այսորիկ ականատես եղաք մեր» (տպ. էջ 137):